

Վ Ի Շ Տ Ն Է Ն Ո Ր Է Ն

Վիւսն է նորէն,
Դեղին ժպիսն իւր շուրթերուն,
Մազիկներն իւր խրած ուժգին
Հէ՛ք իմ սրտին:

Վիւսն է նորէն,
Տապարն ուղղած արմասներուն
Թոյլ, ազազուն իմ հաւաստին:
Իւր բազուկով զերահօր
Խլիւ փորձող
Ծիլը կանաչ իմ երազին:

Վիւսն է նորէն,
Բազմածանիք,
Իւր խոցերով խորակնիւ.
Բիրս, անզիջող,
Հին թեւածի, անգութ ոտիս,
Եռանդ, կորով,
Սեղծագործ ամէն ալիւ
Պամբեցընող:

Վիւսն է նորէն,
Ողնուկո՛ւրը մեր այս կեանքին,
Չայն ճա՛հ պահող հուրը ներքին,
Ոռանց որուն,
Շէնքը փարթամ մեր օրերուն,
Ձերթ պարկ պարապ,
Ինք իւր վրայ կը կծկուի ու կը փլի:

Վիւսն է նորէն,
Անբեկ օրէնք ճիւղերքին,
Ձի գիրն է մեր ճակատին
Մեր հացն ուտել
Համուլն աղի մեր ֆրսիներին:

Ի՞նչ է կեանքը առանց վիւսի,
Իմաստազերծ, միապաղաղ,

20 Ն,

(Հ. Բ. Ը. Մ. ի մեծ ընտանիքի

բոլոր անդամներուն)

(75ամեակի առիթով)

Արեւելեան կողմն աշխարհի
 Ծնար դուն օր մը բերկրալի,
 Զուրերուն մօտ Մայր Նեղոսի:
 Սասար հղար ամէն հայու
 Կարիքներուն ծովածաւալ,
 Եւ Միութեան խորհրդանիշ
 Զիրար սեղմող ձեռքեր երկու,
 Բառեր երեք՝ «Եղբայր եմք մենք»:
 Այդ օրերուն ժողովուրդը
 Կ'ապրէր դեռ իր հողին վրայ,
 Իրար խառնած ճագնապ, կսկիծ:
 Սակայն պահը կը հասուննար
 Մեծ Ոսոխի սալաքանդներուն,
 Եւ Ապրիլեան օր մը իաղաղ
 Քեցց ճարաւ տունը հայուն՝
 Ուշադրեցին չորս ծագերուն ...:
 Դուն օգնութեան եկար նորէն
 Բեկորներուն մեր ցիրուցան:
 Վերածնունդ Հայրենիքին
 Բացիր նոյնպէս ձեռքդ բարի,
 — Նոր օրերու Ռամարացի, —
 Մշուհներուն մէջ տառապող

Մեռել սպասող պարապ դագաղ,
 Անլեռ ցամաք, անալիք ծով ու անաղ
 Ունծուիս կրակ, ձորձ հնամառ: [հաւ,

Վիշքը կայ միշտ,
 Բայց անոր դէմ ե՞րբ է որ մենք
 Սերը դնել պիտի գիտնանք
 Մեր սրտերուն իբրեւ վաղանք:

Գ. ՀԱՐՏԱՐ